

# ԿՈՄԻՏԱՍԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ՓԱՐԻԶՈՒՄ ՀԱՎԵՐԺԱՑՐԵՑ 1915Ի ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՉՈՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

Հուշարձանի հանդիսավոր բացումը կատարվեց 2003 թվականի ապրիլի 24ին Փարիզում, Կանադայի հրապարակում  
Այս հրաշալի իրագործումը հնարավոր եղավ շնորհիվ անձևվեր մարդկանց աշխատանքի

## ՊԱՏՄԱԿԱՆԸ

1. Առաջին դիմումները
2. Ծրագրի վերածնունդը 19 տարի հետո, Ապրիլի 24ի Հանձնախմբի նախաձեռնությամբ
3. Համառոտ հիշեցում Ապրիլի 24ի Հանձնախմբի մասին
4. Կոմիտասի րնտրությունը
5. Արվեստագետ՝ Դավիթ Երեւանցի
6. Արձանը
7. Ֆինանսավորումը

### 1. Առաջին դիմումները

1978 թվի հունվարի 27ին, Փարիզի հոգեւոր առաջնորդ, Եվրոպայում Կաթողիկոսական փոխանորդ, Արքեպիսկոպոս Սերովբե Մանուկյանը ֆրանսահայերի անունից դիմում է Փարիզի քաղաքապետ Ժակ Շիրակին, Ֆրանսիայի մայրաքաղաքում մեկուկես միլիոն հայ նահատակների հիշատակը հավերժացնող մի հուշարձան կանգնեցնելու համար: Դա Եղեռնին նվիրված հուշարձանի իրականացման առաջին քայլն էր: Նույն թվականի սեպտեմբերի 15ին Փարիզի քաղաքապետը դրական պատասխան է ուղարկում Արքեպիսկոպոս Սերովբե Մանուկյանին:

Ամփոփապես ստեղծվում է Ֆրանսահայ համայնքի մի ներկայացուցչություն իրավաբան Արման Բարսեղյանի եւ Ռոժե Ջրբաշյանի մասնակցությամբ:

Սկզբում հուշարձանի տեղադրման համար Փարիզի քաղաքապետարանի կողմից ընտրվում է Ինվալիդ կամուրջի աջափնյա անկյունը, իսկ ապա այն փոխարինվում է Ֆ. Ռուզվելտի եւ գորավար Էյզենհաուերի պողոտաների միջեւ ընկած անկյունով: Նախագծի իրագործումը հանձնվում է ճարտարապետներ Սագսյանին եւ Լանգլուային:

Բայց ինը երկար տարիների ընթացքում առնված տարբեր քայլերից հետո եւ չնայած կատարված որոշ առաջընթացին գործը մտնում է փակուղի:

Արքեպիսկոպոս Սերովբե Մանուկյանի մահվանից հետո Եղեռնի հուշարձանի իրականացման գործը իր ձեռքն է վերցնում նրա հաջորդը՝ Արքեպիսկոպոս Գյուլտ Նագաշյանը, որը 1987ի հոկտեմբերի 22ին Փարիզի քաղաքապետին գրած իր նամակով հիշեցնում է նրան իր խոստման մասին, կշում է նախագծի անցած զանազան փուլերը եւ մանավանդ հիշատակում Զաղաքաշինության վարչության կողմից 1987 թվի հունիսի 18ին տրված համաձայնությունը ինչ վերաբերվում է ավելի փոքր չափերով մի կոթող կանգնեցնելուն, ինչպես նաեւ այդ առթիվ Փարիզի քաղաքային Խորհրդի հայտնած հավանությունը: Բայց Սրբազան Գյուլտ Նագաշյանի նամակը մնում է անպասխան:

Դրանից հետո, չնայած տարբեր դիմումներին, ծրագիրը երկար ժամանակ մնում է «քնած»: Հավանաբար Ֆրանսիայի եւ Թուրքիայի այդ ժամանակվա հարաբերություններն իրենց դերն են ունեցել այդ հարցում:

### 2. Նախագծի վերածնունդը 19 տարի հետո, Ապրիլի 24ի Հանձնախմբի նախաձեռնությամբ

Մինչդեռ Փարիզում կառուցվելիք 1915ի Ցեցասպանությանը նվիրված հուշարձանի ծրագիրը լրիվ «քնած» վիճակում էր, Ապրիլի 24ի Հանձնախումբը նախաձեռնում է նրա վերակենդանացմանը:

Սրբազան Սերովբե Մանուկյանի առաջին նամակից ճիշտ 19 տարի հետո, 1997ի հունվարի 17ին, Ապրիլի 24ի Հանձնախմբի նախագահ Ժան Վարուժան Կյուրեղյանը գրում է Փարիզի այդ ժամանակվա քաղաքապետ Ժան Տիբերիին (կարողալ մեր գրությանը կից): Արագորեն, ընդամենը մեկ շաբաթ հետո, Կյուրեղյանը ուղղում է վերջինիս երկրորդ մի նամակ: Միաժամանակ, Ապրիլի 24ի Հանձնախումբը խնդրում է Ամենայն Հայոց Կաթողիկոս, Վեհափառ Գարեգին Ա ին (որը այդ օրերին պետք է հանդիպեր Փարիզի քաղաքապետին), բարեխոսել հուշարձանի մասին: Հավանաբար, Վեհափառի միջամտությունը նպաստում է գործի հաջողությանը:

Նախքան որեւէ քայլ առնելը սակայն, Ապրիլի 24ի Հանձնախումբը կարելու է համարում ապագա հուշարձանի համար նպատակահարմար մի վայր ապահովել: Փարիզի քաղաքաշինարարության ծառայություններին մոտիկ կանգնած անձանց կողմից արտակարգ մի տեղ է առաջարկվում Էյֆելյան աշտարակին կից՝ Շան դը Սարսում: Ապրիլի 24ի Հանձնախմբի երեք ճարտարապետները՝ (որոնք նաեւ նրա հիմնադիր անդամներից էին) Ժ.Վ. Կյուրեղյանը, Մ. Տեիրմենճյանը եւ Ժ. Խաչիկյանը լծվում են գործի եւ պատրաստում են ապագա հուշարձանի

Նախնական նախագիծը: Ապրիլի 24ի Հանձնախմբի նախագահ՝ ժան Վարուժան Կյուրեղյանի հետ 1997 թվականի հունվարի վերջին ունեցած իրենց առաջին տեսակցության ժամանակ, Փարիզի քաղաքապետ ժան Տիբերին հաստատում է այն ժամադրությունը որ տեղի էր ունենալու քիչ ժամանակ անց, փետրվարի 19ին, ապագա հուշարձանի տեղավայրում քաղաքապետարանի իր գործակիցների եւ Ապրիլի 24ի հանձնախմբի պատասխանատուների միջեւ: Նախագծի մի օրինակ հանձնվում է քաղաքապետին:

Քաղաքապետ ժան Տիբերիի առաջին պատասխան նամակը ուղղված Ապրիլի 24ի Հանձնախմբի նախագահին, կրում է 1997 թվականի փետրվարի 21ի ամսաթիվը (մեր գրությանը կից): Դրան հետեւում են այլ նամակներ եւ պետք է ասել որ ժան Տիբերին բավական նպաստում է հուշարձանի ծրագրի առաջընթացին:

Հետագայում քաղաքապետարանից խորհուրդ է տրվում մի այլ տեղավայր գտնել հուշարձանի համար այն պատճառաբանությամբ (գուցե եւ անտեղի), թե Փարիզի 7րդ թաղամասի քաղաքապետարանը կմերժի նախագիծը... այդ թաղամասի բնակիչների կողմից արվելիք առարկության հետեւանքով (մինչդեռ արդեն դրական կապեր էին ստեղծվել 7րդ թաղամասի քաղաքապետի հետ): Այնուամենայնիվ Հանձնախմբի ճարտարապետները մի այլ ազատ եւ նպաստավոր տեղավայր են փնտրում մայրաքաղաքում: Նրանց որոնումները կանգ են առնում Կանադայի հրապարակի վրա: Տեղը հիանալի էր, սակայն գոյություն ուներ մի անպատեհություն: Կոթողը պետք է պարտադրաբար ներկայացներ մի անհատականություն:

Եվ այդպես է որ Ապրիլի 24ի Հանձնախմբի ընտրությունը կանգ է առնում հայ ժողովրդի հանճարի՝ Կոմիտասի վրա, որը խորհրդանշում էր 1915 թվականի Եղեռնը, քանի որ անձամբ կրել էր նրա հետեւանքները:

Ժան Տիբերիի կողմից Ապրիլի 24ի Հանձնախմբի նախագահ Ժ.Վ. Կյուրեղյանին ուղարկած առաջին նամակին հաջորդող երկու տարիների ընթացքում, վերջինիս համար եւս երկու առիթ է ներկայանում հանդիպելու Փարիզի քաղաքապետին, ինչը որ նպաստում է գործի առաջացնթացին:

Հետագայում առնվում են իհարկե շատ ու շատ քայլեր պատկան մարմինների վարչական եւ տեխնիկական բաժինների մոտ, հրավիրվում են ժողովներ, կատարվում են քննարկումներ եւ ի վերջո շնորհիվ բոլորի միացյալ ջանքերի, եւ հատկապես Փարիզի Հայոց եկեղեցու մասնակցության, Եղեռնի հուշարձանի ծրագիրը մտնում է իր իրագործման փուլի մեջ: Կոմիտասի քանդակի համար կազմակերպվում է մի մրցույթ, որի ժամանակ երեք հայ քանդակագործներ ներկայացնում են իրենց նախագծերը:

Փարիզի քաղաքապետարանը ընտրում է տաղանդավոր քանդակագործ Դավիթ Երեւանցու նախագիծը:

Եվ 2001թվականի հունվարի 29ին է միայն, այսինքն այն ժամանակ երբ Ժ. Վ. Կյուրեղյանին հաջորդել էր Ա. Կեովճյանը որպես Ապրիլ 24ի Հանձնախմբի նախագահ, որ Փարիզի քաղաքապետ ժան Տիբերին հայտարարում է քաղաքային խորհրդի վերջնական դրական որոշումը հուշարձանի կառուցման վերաբերյալ:

2003 թվականի ապրիլի 24ին, մի հոծ բազմության եւ բազմաթիվ անհատականությունների ներկայությամբ կատարվում է 1915 թվականի ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող Կոմիտասի արձանի բացումը Փարիզի Քաղաքապետարանի եւ այժմյան քաղաքապետ Բերտրան Դըլանտեի գլխավորությամբ:

### **3. Համառոտ հիշեցում Ապրիլի 24ի Հանձնախմբի մասին**

Ապրիլի 24ի Հանձնախումբը ստեղծվել է 1994 թվականի հոկտեմբերին: Այդ ստեղծման համար նպաստավոր է հանդիսացել այն փորձառությունը որ ձեռք էր բերվել շնորհիվ մի քանի տարիներից ի վեր գոյություն ունցող եւ հայկական ավանդական կուսակցությունները համախմբող ու համակարգող COPA (Ֆրանսերեն հապավում) կոչվող կազմակերպության: Ապրիլի 24ի Հանձնախումբը կազմված Գյուլտ Արքայիսկոպոս Նազաշյանի նախաձեռնությամբ, կոչված էր կազմակերպելու Հայոց ցեղասպանության ութսունամյակի նշանավորումը: Նա հիմնադրվում է տարբեր կազմակերպություններից սերող յոթ կամավորների կողմից (Ժ.Վ. Կյուրեղյան, Ա. Պաղտիկյան, Մ. Տեիրմենճյան, Ժ. Խաչիկյան, Ժ. Սարյան, Տ. Շիրվանյան, Վ. Տեր Սարգսյան): Ժ.Վ. Կյուրեղյանը ընտրվում է հանձնախմբի նախագահ, Ժ. Սարյանը՝ քարտուղար, իսկ Ժ. Խաչիկյանը՝ գանձապահ: Եղեռնի ութսունամյակի մեծ հանդիսավորությամբ տեղի ունեցած նշանավորումից հետո հանձնախումբը չի ցրվում: Եվ արդեն պետք էր վարել իրադարձության ֆինանսավորումը, որը հասնում էր մոտ 350 000 ֆրանկի (54 000 \$): Մյուս կողմից մեծ էր միասնաբար աշխատելու ցանկությունը: Եվ այլ կազմակերպություններ գալիս են միանալու, իրեն՝ իսկապես շատ գործուն ձեռով դրսևորած այս հանձնախմբին:

Բավական դժվարին մի գործ է հանդիսանում հանձնախմբի կանոնադրության խմբագրումը: Դաշնակցական կուսակցությունը, ՀԲԸՄ ը, Առաքելական եւ Կաթողիկե Եկեղեցիները, Աղքատախնամը մերժում էին պաշտոնապես մտնել համընդհանուր մի կառույցի մեջ: Մինչդեռ նախատեսված էր հանձնախմբի կանոնադրությունը կազմել մեկ ամսվա ընթացքում, անհրաժեշտ եղավ չորս ամիս շարունակ աշխատել իրավաբան Կատյա Երեցյանի հետ, այն վերջնականապես խմբագրելու եւ բոլորին բավարարություն տալու համար: Հանձնախմբի պաշտոնական գրանցումը իբրեւ ոչ կառավարական կազմակերպություն կատարվում է 1998 թվականի հունվարի 31ին:

Ապրիլի 24ի Հանձնախմբի կանոնադրության կետերից մեկն էր 1915 թվականի ցեղասպանության ճանաչումը, ինչը որ հանգեցնում է 1998 թվականի մայիսի 29ին Ֆրանսիայի հանրապետության Ազգային Ժողովի կողմից միաձայնությամբ Հայոց ցեղասպանության ճանաչմանը՝ Ֆրանսահայության առաջին, անհավատալի եւ չափազանց հուզիչ հաղթանակին: Այլ հաղթանակներ հետեւում են դրան:

Յետագայում, 2001 թվականի հոկտեմբերի 21ին, Ապրիլի 24ի Հանձնախումբը վերափոխվում է վերանվանվելով՝ Ֆրանսիայի Հայկական Կազմակերպությունների Համակարգման Հանձնախումբ (CCAF):

Հանձնախմբի նախագահները նրա հիմնադրումից ի վեր եղել են՝  
Ժան Վարուժան Կյուրեղյանը՝ 1994թվականի հոկտեմբերից մինչեւ 1998 թվականի հոկտեմբեր ամիսը

Ալեքսի Կեօվճյանը՝ 1998 թվականի հոկտեմբերից մինչեւ 2002 թվականի հոկտեմբերը

Արա Գրիգորյանը՝ 2002 թվականի հոկտեմբերից մինչեւ այսօր:

Հանձնախումբն ունի նաեւ Իրավարար Հանձնաժողով, մշտական անդամներով, կազմված Ապրիլի 24ի Հանձնախմբի հիմնադիր անդամներից: Այդ Հանձնաժողովի նախագահն է Ժան Վարուժան Կյուրեղյանը:

#### 4. Կոմիտասի ընտրությունը

Ապրիլի 24ի Հանձնախումբը որոշել էր Ցեղասպանության 82րդ տարեդարձի առթիվ հարգանք մատուցել Կոմիտասի հիշատակին:

Ահավասիկ այդ առթիվ Ժան Վարուժան Կյուրեղյանի կողմից, 1997 թվականի Ապրիլի 24ին, Վիլժուիֆի հիվանդանոցի պարտեզում արտասանած ճառը՝

*Հայ ժողովրդի ամենամեծ հանճարներից մեկը՝ Սողոմոն Սողոմոնյանը, ծնվել է 1869 թվականի սեպտեմբերի 26ին, Փոքր Ասիայի Զյութահիա քաղաքում: Կոմիտաս անունը նա վերցրել է իր ձեռնադրության ժամանակ: Որբացած 12 տարեկանին, նա ուշադրություն է գրավել իր ձայնային հատկություններով եւ երաժշտական ընդունակություններով, եւ ուղարկվել է Էջմիածնի Դպրեվանք շարունակելու իր հոգեւոր եւ երաժշտական ուսումը: Նա դարձել է միաբանության անդամ:*

*Տեսնելով Կոմիտասի բացառիկ ընդունակությունները, նրան Էջմիածնից ուղարկում են Բեռլին, նշանավոր երաժիշտ եւ դասատու Ռ. Շմիդտի մոտ իր երաժշտական ուսումը կատարելագործելու նպատակով: Վերադառնալով Էջմիածին, Կոմիտաս վարդապետը նախաձեռնում է մի վիթխարի աշխատանքի: Անցնելով Հայաստանի ընդարձակ գավառները, նա հավաքում է, գտնում, եւ՝ ներդաշնակում ժողովրդական եւ կրոնական երգերը: Առանց նրա մեր երաժշտական գանձերի մի մեծ մասը, որ մինչ այդ մնացել էր բանավոր, այսօր անպայման անհետացած կլինեին, մանավանդ որ դրան հաջորդած տարիներին 1915 թվականի ցեղասպանության ժամանակ եւ նրա հետեւանքով, Հայաստանի մի մեծ մասը ջնջվում է աշխարհի քարտեզից իր բնակչության հետ միասին:*

*Կոմիտասը արժեքավորում է հայկական երաժշտությունը, նրա ոճը, լինի այդ՝ ժողովրդական, թե՛ հոգեւոր երգերի բնագավառում: Նա մանավանդ վերաստեղծում է հայկական եկեղեցում մինչեւ օրս կատարվող պատարագը:*

*Կոմիտասը երկու անգամ եղել է Փարիզում:*

*1906 թվին, կազմակերպելու համար հայկական երաժշտության առաջին փառատոնը, որը ունենում է մեծ հաջողություն, երեւան հանելով մինչ այդ չճանաչված հայկական գեղագիտական արժեքները: Կոմիտասը հայկական երգերը ներկայացրել էր հայերեն լեզվով, եւ այն էլ ֆրանսիական «Կոնսեր Լամուրեո» հայտնի երգչախմբի կատարմամբ:*

*1914 թվին Կոմիտասը մասնակցում է երաժշտության Միջազգային Ընկերության ժողովին, հանդիսանալով նրա բանախոսներից մեկը:*

*Կոմիտասի փոթորն եւ փայլուն ասպարեզը հանկարծակիորեն եւ վերջնականապես ընդհատվում է սակայն 1915 թվականի ապրիլի 24ին: Թվական, որ դրոշմում է օսմանյան կառավարության կողմից գործադրված եւ մեկ ու կես միլիոն զոհեր տված ցեղասպանության սկիզբը: 1915 թվականի ապրիլի 24ի այդ օրը Կոմիտասը ութ հարյուր այլ հայ մտավորականների հետ միասին ձերբակալվում է Պոլսում, ապա աքսորվում... դեպի՝ մահ: Բայց շնորհիվ Միացյալ Նահանգների դեսպանի անձնական միջամտության նա կենդանի է վերադառնում դժոխքից: Թեեւ արդեն ուշ էր երաժշտական իր ասպարեզը շարունակելու համար, բանի որ լինելով չափազանց զգայուն եւ տեսնելուց հետո իր շուրջը կատարված սարսափները Կոմիտասը վերջնականապես կորցրել էր իր բանականությունը:*

*1919 թվին Փարիզի եւ Պոլսի նրա բարեկամները կարողանում են բերել տալ Կոմիտասին Փարիզ, որտեղ նա անմիջապես բուժվել է սկսում Վիլժուիֆի հիվանդանոցում, մնալով այնտեղ մինչեւ իր մահը՝ 1935 թվականը: Բայց Կոմիտասը այլեւս երբեք չի վերագտնում իր բանականությունը: 1915 թվականի ապրիլի 24ին վերջնականապես կանգ է առնում նրա երաժշտական գործունեությունը: Ավելին, իր խելագարության առաջին տարիների ընթացքում, անհետանում է իր ստեղծագործությունների մի մասը, մանավանդ այն ամենը, ինչ վերաբերվում է միջնադարյան հայկական երաժշտության վերծանման եւ գրառման առթիվ կատարած իր երաժշտագիտական աշխատություններին:*

*Չնայած դրան անգնահատելի է Կոմիտաս վարդապետի թողած երաժշտական ժառանգությունը: Դա մի անսպառ աղբյուր է հայկական երաժշտության համար, հանդիսանալով միաժամանակ համաշխարհային երաժշտական արվեստի հարստության մի մասնիկը:*

*Կոմիտասը շատ մոտիկից հետաքրքրվել է նաև քուրդ եւ թուրք ժողովուրդների երաժշտությամբ եւ ընդհանրապես մշակույթներով: Դրբյուսին մեծ հիացում եւ ակնածանք էր տածում նրա հանդեպ:*

*Կոմիտասը համարվում է հայ դասական երաժշտության հիմնադիրը, ինչպես նաև երաժշտության ստեղծագործական նոր դպրոցի նախակարապետը:*

## **5. Զանդակագործ Դավիթ Երեւանցին**

Դավիթ Երեւանցին ծնվել է 1940 թվին Յայաստանում: Իր երիտասարդ տարիքից նա Երեւանի գոհարեղենի մի արհեստանոցում սկսել է մասնագիտանալ մետաղի վրա փորագրության արհեստի մեջ (1956-1959): Հետագայում նա ընդունվել է Երեւանի Թերլեմեզյանի անվան Դեկորատիվ Արվեստների դպրոցը (1963-1968) ամբողջացնելով գեղարվեստի բնագավառում իր գիտելիքները:

Իր բազմակողմանի մասնագիտացումը նրան մղել է ստեղծել բազմաժանր գործեր տեխնիկայի եւ նյութի առումով, ինչպես նաև հարուստ արտահայտչականությամբ ու գեղարվեստական բարձր արժեքով:

Դավիթ Երեւանցին սկսել է ցուցադրել 1965 թվականից: Նրա գործերը ցուցադրված են Յայաստանի, Բուլղարիայի, Ռուսաստանի, Չեխիայի, եւ Ֆրանսիայի (Փարիզի Դեկորատիվ Արվեստների եւ Դրամատիկ թանգարան) թանգարաններում:

Դավիթ Երեւանցին ստեղծել է արվեստի գործեր սկսած ամենափոքր չափերի մետաղական մեդալներից մինչեւ քարե հսկայական քանդակները: Դիմելով մերթ կավագործությանը, մերթ գեղանկարչությանը եւ փորագրանկարչությանը նա հասել է արտիստական ինքնատիպ մի արտահայտչականության որը նրան հնարավորություն է տալիս իր ստեղծագործության մեջ միաձուլել հայկական արվեստի եւ արհեստագործության հին ավանդույթները արեւմտյան արվեստի արդիական արժեքների հետ:

Ֆրանսիայում իրականացրած նրա ստեղծագործությունների թվում են՝

Հուշարձան՝ Ֆրենկյան հիմնարկության համար, Բուրսո դոյակում  
Ռուժե դը Լիլ փողոցի շենքի ճակատի խորաքանդակը  
Իսի լե Մուլինոյի հայկական եկեղեցու քանդակված դուռը  
Իսի լե Մուլինոյի Ֆրանկո Յայկական բարեկամությանը նվիրված գործը  
Լիլա (Սեն Դընի) քաղաքի կողմից պատվիրված քանդակը

## **6. Արձանը**

Մեծարգո Կոմիտաս վարդապետի արձանը, որն ունի չորս մետր բարձրություն, վեր է խոյանում Սենթ Մաքսիմենի սպիտակ քարով պատրաստված երկու մետր բարձրությամբ մի պատվանդանի վրա: Արձանը պատրաստված է բրոնզից եւ ավարտված հնացված կանաչ փայլով:

Կոմիտասը մի հանճար էր երաժշտական իր արվեստում: Յուրաքանչյուր Յայի համար նա մարմնավորում է ոչ միայն հայ ժողովրդի ոգին եւ մշակույթը այլ նաև 1915 թվականի ցեղասպանությունը, ինքն էլ հանդիսանալով զոհերից մեկը այդ ցեղասպանության: Արձանը պարունակում է իր մեջ Կոմիտասի մարմնից դուրս եկող մի երեխայի պատկերը, որը ցեղասպան եղած հայ ժողովրդի վերածնունդի խորհրդանշանն է: Ինչ վերաբերվում է խաչքարին, նա ներկայացնում է հայ ժողովրդի հավաքական հիշողությունը եւ խորհրդանշանը հայկական ինքնությունը:

## **7. Ֆինանսավորումը**

Անհրաժեշտ դրամագլուխը ունենալու համար, մի հայ բարերարի շուրջը եւ նրա նախագահության ներքո ստեղծվել է « Կոմիտաս վարդապետի բարեկամներ » միությունը: Այդ միությունը CCAFի (Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգիչ հանձնախումբ) գլխավորությամբ շարունակում է մինչեւ վերջ տանել ավելի քան 25 տարվա հնություն ունեցող Եղեռնի հուշարձանի ծրագիրը, ավելի ճիշտ կլինի ասել նրա վերջին փուլը: Այդ առթիվ մի բաժանորդագրություն է ստեղծվել ողջ համայնքի համար, այնպես, որ յուրաքանչյուր հայ անձնապես կարողանա մասնակցել այս հուշարձանի կառուցմանը իր դրամական մասնակցությամբ, ի հիշատակ անեության ճանապարհների զոհված իր սեփական նախնիների:

Արձանի բացումը նախատեսված էր 2003 թվականի ապրիլի 24ին: Ժամանակացույցը հարգելու համար եւ քանի որ անհրաժեշտ էր վճարել քանդակի իրագործմանը մասնակից տարբեր արվեստագետներին արված պատվերները, ինչպես նաև քանդակագործի աշխատանքը, « Կոմիտաս վարդապետի բարեկամներ » միության նախագահը բանկային մի վարկ է ստանձնել, երաշխավորելով այն անձնապես: Յայերի նվիրատվությունները կգան հատուցելու այդ վարկը վաղ թե ուշ: